

ՆՈՅԵՄԲԵՐ 2021

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	7
1.3. Ջրահեռացման համակարգ	8
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	9
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	10
2. Առևտրային տնօրինություններ	11
2.1. Բաժանորդների տվյալներ	12
2.2. Հասույթ	12
2.3. Գանձում	13
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	14
2.5. Ջրաչափեր	15
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	16
3. Տեխնիկական տնօրինություն	17
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	18
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	19
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	21
3.4. Ջրատար համակարգի բարելավում	21
3.5. Գոտիավորման աշխատանքներ	22
3.6. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	25
3.7. 1-85 թեժ գիծ	25
4. Լրատվական ծառայություն	26
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	29
5.1. Փաստաթղթերի մշակում	30
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	30
5.3. Դասընթացներ/սեմինարներ	30
5.4. Բուժզննում	32
5.5. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	32
5.6. Համագործակցություն ՀՀ ԱԻՆ-ի մարզպետարանների հետ	33
5.7. Փորձաքննություններ	33
6. Համակազմային ցանց և սերվերային համակարգ	34
6.1. Ինտերակտիվ համակարգ	35

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քաղաք Երևան, Էրեբունի վարչական շրջան

● Նուբարաշեն-Մասիս ավտոճանապարհին հարող ձորակով անցնող Գառնի-Երևան $d=800$ մմ պողպատե ջրատարի $L=55$ զձ/մ երկարությամբ կոռոզիայի ենթարկված հատվածը «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է $d=800$ մմ $L=55$ զձ/մ պողպատե խողովակներով:

● Վերակառուցված $d=800$ մմ ջրատարի վրա տեղադրվել է $d=200$ մմ ջրթող փական, որը կապահովի առաջացած վթարի դեպքում ջրատարը օպերատիվ կերպով ջրազրկումը, և վթարավերականգնողական աշխատանքներն ավարտելուց հետո կարճ ժամանակահատվածում ջրամատակարարման վերականգնումը:


● Կատարվել է նաև փլուզված ջրաչափական հանգույցի դիտահորի վերակառուցում:



Մարզ Արարատ




● Ուրցաձոր համայնքի Տիգրան Մեծ և Բահասկյան փողոցների $d=50$ մմ անոթակ պոլիէթիլենային խողովակներով ջրագիծը գտնվում էր քայքայված վիճակում, ինչի հետևանքով հաճախակի էին կրկնվող վթարները և առաջացնում էին բնակիչ-բաժանորդների դժգոհությունը: «Արտաշատ» տեղամասի «Վեդի» հենակետի աշխատակիցների կողմից $d=50$ մմ $L=500$ զձ/մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագիծը փոխարինվել է նոր $d=50$ մմ պոլիէթիլենային խողովակներով: Իրականացվել են անհատական միացումներ $d=20-25$ մմ $L=80$ զձ/մ ընդհանուր երկարությամբ: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $d=50$ մմ $L=500$ զձ/մ երկարությամբ քայքայված ջրագիծ, տնտեսվել է $Q=1,5$ լ/վ ջրաքանակ:



Վայոց Ձոր

Համայնք Եղեգիս, գյուղ Շատին

● Շատին գյուղի 7-րդ փողոցի թվով 6 առանձնատների ջրամատակարարումն իրականացվում էր «40 Ադրբուր» $d=250$ մմ ջրատարից, որտեղ ջրի ճնշումը մոտ $P=8$ մթն էր: Նշված փողոցի մետաղական տարբեր տրամաչափերի ջրագծերը գտնվում էին խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված վիճակում և շահագործման պիտանի չէին, ինչպես նաև բարձր ճնշման պատճառով հաճախակի առաջանում էին վթարներ, որոնք բերում էին ջրի պոտորվածության և որակի անկման տեղիք տալով բնակիչ-բաժանորդների արդարացի բողոքներին: Ջրամատակարարումը բարելավելու նպատակով «Վայք» տեղամասի



աշխատակիցների կողմից նշված փողոցում գոդման միջոցով խցափակվել են d=15-50մմ քայքայված, կոռոզիայի ենթարկված ջրագծեր՝ թողնելով մեկական 15մմ մուտքագծեր, որից հետո տեղադրվել են թվով 6 d=15մմ ջրաչափեր ջրաչափական դիտահորերում:

7-րդ փողոցի թվով 6 առանձնատների ջրամատակարարումը՝ հաշվի առնելով «40 Աղբյուր» ջրատարի ծանրաբեռնվածությունը, ներկայումս իրականացվում է «Ոստան» ջրատարից:

● Շատին գյուղի 26 փողոցի թվով 9 առանձնատների ջրամատակարարումն իրականացվում է «40 Աղբյուր» d=250մմ ջրատարից: Նշված փողոցը սնող խիստ քայքայված, կոռոզիայի ենթարկված d=50մմ մետաղական ջրագիծը շահագործումից հանվել և վերակառուցվել են նոր d=20մմ L=105գծ/մ և d=32մմ L=180գծ/մ պոլիէթիլենային ջրագծեր:

● Շատին գյուղի Հոստան թաղամասի կենտրոնական փողոցում վերակառուցվել են նոր d=20մմ L=40գծ/մ և d=50մմ L=180գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային ջրագծեր՝ թվով 9 առանձնատների համար: Տեղադրվել են թվով 9 d=15մմ ջրաչափեր ջրաչափական դիտահորերում:

Կատարված աշխատանքների արդյունքում Շատին գյուղում բարելավվել է խմելու ջրի որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, խնայվել է մոտ 12լ/վրկ ջրաքանակ, կարգավորվել է ժամային գրաֆիկը:



Նույնբեր ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1693
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	45244
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	30925
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	12130
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	83
Շահագործումից հանված ջրագիծ	մ	4050.5
Կառուցված ջրագիծ	մ	5290.5
Կառուցված կոյուղագիծ	մ	508.8
Վերացված գաղտնի վթարներ	հատ	25
Փոխարինված փական	հատ	33
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	529
Մաքրված դիտահոր	հատ	806
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	25.9
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	1424
Ջրահեռացման ցանցում	հատ	2201
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	554

Նոյեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	968	1271	503

1.2. ԶՐԱԶԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է նոյեմբեր ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									Ընդամենը
	15	20	25	32	40	50	65	80	100	
Տեղադրված	249	7	2	1	0	1	0	0	0	260
Փոխարինված	268	18	7	3	2	3	1	0	0	302
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	271	17	1	2	2	3	2	4	0	302
Ընդամենը	788	42	10	6	4	7	3	4	0	864

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 864 ջրաչափ: Կատարված աշխատանքների 91 %-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Նոյեմբեր ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև՝ Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1910	262	0
2	Մաշտոց	1200	178	90
3	Շահումյան	920	155	3
4	Զեյթուն	540	227	0
5	Շիրակ	735	416	0
6	Արթիկ	480	65	41
7	Ապարան	0	25	0
8	Ալավերդի	3790	24	33
9	Աշոցք	0	10	0
10	Բերդ	0	8	3
11	Իջևան	730	45	0
12	Լոռի	3190	174	4
13	Նոյեմբերյան	0	15	0
14	Սպիտակ	0	16	0
15	Ստեփանավան	0	39	0
16	Թալին	0	10	289
17	Տաշիր	420	10	0
18	Չարենցավան	370	77	1
19	Աբովյան	2313	80	0
20	Հրազդան	700	104	45
21	Կենտրոն	190	212	6
22	Հյուսիս	180	228	0
23	Հարավ	0	347	7
24	Էրեբունի	0	184	12
25	Արմավիր	0	143	0
26	Էջմիածին	0	124	54
27	Աշտարակ	0	43	0
28	Արտաշատ	0	89	0
29	Արարատ	0	94	26
30	Մասիս	0	60	0
31	Գավառ	505	18	0
32	Սևան	210	86	11,8
33	Մարտունի	0	22	0
34	Վարդենիս	220	8	0
35	Ճամբարակ	0	16	0
36	Դիլիջան	50	38	39
37	Վայք	0	3	0
38	Եղեգնաձոր	195	14	0
39	Զերմուկ	0	36	0
40	Սիսիան	0	54	9
41	Գորիս	0	32	0
42	Կապան	176	98	0
43	Մեղրի	390	38	0
	Ընդամենը	19414	3927	662

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների և էլ. սպասարկման» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Վարդենիսի կեղտաջրերի պոմպակայանը բավականին ժամանակ աշխատում էր մեկ պոմպով, քանի որ 2-րդ պոմպը շարքից դուրս էր եկել և ենթակա չէր վերանորոգման: Հետևաբար ձեռք բերվեց նոր պոմպ և այն տեղադրվեց պոմպակայանում: Տեղադրվեց նաև նոր հակադարձ փական, քանի որ հինը շարքից դուրս էր եկել: Այժմ պոմպակայանն աշխատում է անխափան:

- Սևանի N3 և N5 կեղտաջրերի պոմպակայանների խոշոր մասնիկները որսացող զամբյուղները քայքայվել էին և պիտանի չէին շահագործման համար: Արդյունքում պատրաստվեցին և տեղադրվեցին նոր զամբյուղներ: Ձևվեց նաև պոմպերի աշխատանքը և էլեկտրական սարքավորումները:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում մանր ճաղավանդակներից մեկի քերիչ սանրի ատամները կոտրվել և ծովել էին, որի արդյունքում սարքավորումները թերի էին աշխատում: Արդյունքում այն վերանորոգվեց և այժմ սարքավորումներն աշխատում են իրենց բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	60,139	10.8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	66,007	25.2
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	169,212	5.4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	93,078	10.8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	119,774	9.9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	14,877	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	9,122	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	9,600	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	29,250	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	1,610	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Քանակ
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	80
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	14
Պոմպի տեղադրում	1
Պոմպի ապամոնտաժում	1

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար նոյեմբեր ամսվա ընթացքում նորոգվել են թվով 10 մեքենայի շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 11 մեքենա-մեխանիզմի վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամսանիփներ, առանցքակալներ, կիսաստնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Փոխարինվել են թվով 14 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, անտիֆրիզ և քսայուղեր:

1 մեքենայի մարտկոց փոխարինվել է նորերով:

Թվով 3 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շաղկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 5 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ:

Վերանորոգվել են թվով 5 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուկ լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:

Թվով 4 մեքենայի մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Նորոգվել են թվով 4 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամսանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 5 մեքենայի վրա իրականացվել է գեներատորի նորոգում, փոխարինվել են ածուխներ, դիողային կամրջակներ, առանցքակալներ և տուլկիներ:

Եռակցման աշխատանքներ են իրականացվել թվով 11 մեքենա-մեխանիզմի վրա:

Թվով 4 մեքենայի վառելիքի համակարգերը նորոգվել են, փոխարինվել են բարձր ճնշման մղիչներ, բոցամուղեր, կայծամուներ:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 11 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.12.2021թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 565,873 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2021թ. նոյեմբեր ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	668,518	540,930	80,9
	Իրավաբանական անձ	30,124	24,943	828

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	730,783	589,757	80,7
	Իրավաբանական անձ	35,355	25,167	71,2

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայքեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ (Հայաստանի էլեկտրական ցանցեր և այլն): Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 838 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) զուգահեռ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցլության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Նոյեմբեր ամսվա ընթացքում ստուգաչափվել է 4192 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակն առ 11.2021
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2174	1564	275	4013
	Իրավաբանական անձ	69	93	17	179
	Ընդամենը	2243	1657	292	4192

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ նոյեմբեր ամսին փոխարինված 4192 ջրաչափերի մոտ 47%-ը (կամ 1949 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 136,849 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2021թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ:

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր ցուցանիշ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Նոյեմբեր ամսին գանձումը կազմել է 2,041 մլն դրամ (96 %):

Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում մինչև 2020թ. ապրիլ ամիսը, կիրառվում էին բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և

ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսագանգեր և այլն: Սակայն, հաշվի առնելով աշխարհում այդ թվում Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակը, ընկերությունը նույնիսկ ամսին գերծ է մնացել հիշեցումների և ծանուցումների մինչ այժմ կիրառվող մեթոդներից (բացառությամբ՝ SMS-հաղորդագրությունները): Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում էին պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, վերը նշված հանգամանքներից ելնելով, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ: Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Նույնիսկ ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 222 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 22,1 մլն դրամ ընդհանուր գումարով: Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում է դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Ստորև աղյուսակով ներկայացվում են դեբիտորական պարտքերի և հայտնաբերված խախտումների վերաբերյալ արձանագրություններով դատարան ներկայացված գործերը:

Դատարան ներկայացված գործերի քանակը շարունակական		Բավարարված		Մերժված		2017-2021թ.թ. ընթացիկ գործեր		ԴԱՀԿ ներկայացված գործեր	
քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
10187	1125059114	6859	659576399	158	20991281	3184	453235518	4019	402260596

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը՝ դատարան ներկայացրած գործերի ընդհանուր քանակի 67 %-ն արդեն բավարարված է և ընդամենը 2 %-ը մերժված:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.12.2021թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում նույնիսկ ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	8,406	1,893
Բնակիչ-բաժանորդներ	6,222	1,276
Իրավաբանական անձեր	2,184	617

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների՝ նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 295.4 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2021 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.12.2021թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում՝ ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	697,924	588,168	84.27	34,247	25,157	73.46
	Առանց ջրաչափի	32,859	1,589	4.84	1,108	10	0.90

Տվյալների բազայում 01.12.2021թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում՝ ժամկետանց	%
Առևտրային	869,807	392,138	45.08	38,067	10,552	27.72

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 6048 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 1412 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2360	1935	81.9
գ.Պոռշյան	1593	1064	66.4
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5895	1847	32.3

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Միսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 10140, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 9666, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 1436, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2162, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1369, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 2027 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3986 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Բնտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրազրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում: Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, հիմնականում իրականացվում էր Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից: Հայտնաբերված և արձանագրված խախտումների քանակի նվազումը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ պայմանավորված է նաև երկրում տիրող, վերը նշված իրավիճակների հետ:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	299	137,125	22,127,706

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ




Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի նոյեմբեր ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.8%, ինչը 0.3% պակաս է՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի բաժնի կողմից ՇՏ-ներում կարգաբերվել են թվով 93 ՃԿՓ-ներ: Ստորև ներկայացված է կարգաբերված ՃԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2021թ-ի նոյեմբեր ամսին, 2020թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 234 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսը նվազել է 37 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկում.



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլեկտրաէներգիայի ծախսն Երևան քաղաքում ավելացել է 9 782 ԿՎտ/ժ. (2.06%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր



Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ այս տարի նոր պոմպակայանների թիվն ավելացել է 5 հատով, իսկ էլ. էներգիայի ծախսը՝ 6265 կՎտ:

Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության միջոցով պոմպերի և այլ սպառիչների շահագործման ընթացքում ծագած խնդիրների հայտնաբերման նպատակով:

Ուսումնասիրված հասցեներ

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է թվով 73 հասցեի էլ. հաշվիչների գույքագրում և ընթերցում: Թվով 2 հասցեում կատարվել է մոնտաժային աշխատանք:

- ▶ Խանջյան պ/կ – էլ. հաշվիչի փոխարինում
- ▶ Մեքաստիա 22 – էլ. վահանակի մոնտաժում:

Թվով 10 հասցեում կատարվել է հոսանքի պարամետրերի ստուգում, պոմպակայանի զգնում, թերությունների հայտնաբերում:

Պոմպակայանների ուսումնասիրություն

Թվով 23 խոշոր պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 10 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները: Թվով 364 բակային պոմպակայանում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 249 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

● Չորս հասցեներում նախկին պոմպերի ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերը փոխարինվել են ինվերտորային համակարգով:


Ինվերտորային պոմպի տեղադրում

● Թվով մեկ հասցեում նախկին մաշված պոմպերի և ավտոմատ կառավարման պնևմատիկ համակարգերի փոխարեն տեղադրվել են նոր ինվերտորային պոմպեր:

Լուսվորության մոնտաժում

● Թվով 13 հասցեում վերականգնվել է տարածքի լուսավորությունը, մոնտաժվել են նոր լուսարձակներ:

Տեղադրված ինվերտորային պոմպերի սպառած էլեկտրաէներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 10,107 կՎտ.ժ կամ 13.15%:




Խոշոր պոմպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 14 խոշոր պոմպակայաններում էլեկտրամատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Նոյեմբեր ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 51,015 ԿՎտ/ժամ (6.56%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 201,728 ԿՎտ.ժ/ամիս կամ 10,61 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 99 361 ԿՎտ.ժ կամ 2,67%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացվում են նոյեմբեր ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.


Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
Կառուցված կոյուղագծեր	մետր	174
Շահագործումից հանված կոյուղագծեր	մետր	174
Տեխնիկական պայմանների թվայնացում	հատ	124
Վանաձոր քաղաքի կոյուղագծերի թվայնացում	կմ	237,45
Վանաձոր քաղաքի դիտահորերի թվայնացում	հատ	5120
Մարզային կոյուղու երկարությունը թվայնացումից հետո	կմ	1384.87
Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունն փոփոխված տարբերակով	կմ	1759.93
Եղվարդ քաղաքի թվայնացում ԱՏՀ-ում /թվայնացվել են ջրագծերը, փականները, դիտահորերը/	քաղաք	1
Ստեփանավան քաղաքի թվայնացում ԱՏՀ-ում	քաղաք	1
ԱՏՀ անցկացված համայնքների տվյալների միավորում	համայնք	12
Կենտրոն տեղամասի վթարների քարտեզագրում և մուտքագրում ԱՏՀ տվյալների բազայում	վթար	101
Պոմպակայանների ակտիվների գնահատում դաշտային այցելության միջոցով և մուտքագրում	պոմպակայան	4
Համայնքների թեմատիկ շերտերի թվայնացում և տվյալների բազայի լրացում	համայնք	35
Մասիս քաղաքի ջրային ցանցի վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում ԱՏՀ-ում	քաղաք	1
Իրավաբանական բաժնորդների կետերի ուղղում	կետեր	30
Ֆիզիկական բաժնորդների կետերի ուղղում	կետեր	900
Բազայում նոր ֆիզիկական կետերի ավելացում	կետեր	129
Բազայում նոր իրավաբանական կետերի ավելացում	կետեր	37
Հիդրավիլիկական մոդելների ստեղծում ԱՏՀ բազայի հիման վրա համայնքների համար	համայնք	27
Վանաձոր և Գյումրի քաղաքների վերաբերյալ ԱՏՀ տվյալների տեղեկատվական բազայի հանձնում Ջրային կոմիտեին	Տեղեկատվական բազա	1
ԱՏՀ տվյալների փոխանակման և տվյալների բազայի կառավարման վերաբերյալ կանոնակարգերի և ընթացակարգերի մշակում	մշակում	1
Կատարվում է ՕԿՁ ների տեղադիրքերի և սխեմաների վերաբերյալ ԱՏՀ տվյալների բազայի ստեղծում	բազա	1

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը:

Եղվարդ քաղաքի ՕԿՁ

Եղվարդ քաղաքի ՕԿՁ-ում գործարկվել է երկու ամբարների (1000մ³ և 2000մ³) միջև գոյություն ունեցող միջանկյալ միացումը, որը տվյալ ամբարները դարձնելու էր հաղորդակից: Երկու ամբարներում ջրի լցվածության մակարդակները տարբերվում էին: Չափումներից հետո 1000մ³ ջրամբարը դատարկվել է, որի արդյունքում պարզվել է, որ ամբարը դատարկող խողովակաշարի սկիզբը կնճիթանման է, ինչը և չի ապահովում ամբարների հավասար մակարդակները: Արդյունքում չէինք կարողանում օգտագործել 700մ³ ջուր, իսկ ամռան ամիսներին Եղվարդ քաղաքի 20%-ից ավել հատվածում անհնար էր 4 ժամից ավել ջրամատակարարում ապահովել: Այս աշխատանքներից հետո ամռան ժամանակահատվածում ակնկալվում է քաղաքի ջրամատակարարման տևողությունը դարձնել ավելի քան 8 ժամ:



Գառնի-Երևան ջրատար

Ջրատարի վրա Արին-Բերդ ՕԿՁ-ի հետնամասում վթարված հատվածի փոխարինման համար անհրաժեշտ էր ջրատարի կանգառ: Միննույն ժամանակ, օգտվելով ջրատարի կանգառից, որոշվել է վերանորոգել Գառնիի քլորակայանում քլորից քայքայված ջրատարը: Տվյալ աշխատանքները կազմակերպվել են «Արևելք» ՇՏ-ի և «Ջրառի» ուժերով: Ջրատարի կանգառի աշխատանքների տևողությունը կազմել է 20 ժամ:



Արարատյան հորեր

Ստուգայց է կատարվել՝ ուսումնասիրելու Արարատյան պ/կ-ները սնող հորերի վիճակը: Այցելության ընթացքում պարզվել է՝ որ որոշ հորերի գծային և թողանային փականներ ունեն արտահոսք, իսկ համար 19 հորի հետ կապված, որը տրված էր բետոնապատման, ոչինչ չի արվել, քանի որ համայնքը խոչընդոտել է այդ աշխատանքներին: Այժմ այն գտնվում է անմխիթար վիճակում, իսկ ջուրն աննպատակ արտահոսում է:



Ընթացիկ ամսում կատարվել են շրջայցեր տարբեր ջրատարների վրա, որոնց ընթացքում հայտնաբերվել են մանր վթարներ: Այդ մասին տեղեկացվել է շահագործման տեղամասերին:

3.5 ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Շիրակ տեղամասի հետ համատեղ ուսումնասիրությունն է կատարվել Գյումրի քաղաքի Շահումյան փողոցում, որը ներառված էր փողոցաշինական ծրագրի մեջ: Փողոցով անցնող հին D=300մմ թուջե վթարված ջրագծը հարկավոր էր հանել շահագործումից նոր ասֆալտաշերտի տակ չթողնելու պատճառով: Քանի որ սովյալ փողոցում արդեն իսկ գործում էր նոր ջրամատակարարման ցանց, ուստի դեռևս թուջե ջրագծից օգտվող բաժանորդների միացումները տեղափոխվել են և միացվել նոր D=110 ՊԷ ջրագծին: Արդյունքում խցավիակման եղանակով շահագործումից հանվել է D=300մմ L=813մ թուջե ջրագիծ: Տնտեսվել է մոտ 3-5 լ/վ ջրաքանակ:



● Սևանի Վարսեր համայնքը սնուցող ջրագծի վրա կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է 100մ տրամագծով անհայտ միացում, որը խցափակելուց հետո տնտեսվել է 5լ/վ քանակությամբ ջուր:



● Հրազդան քաղաքում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Միկրոշրջան 131 շենքի մոտ հայտնաբերվել է 1 վթար 0,2լ/վ քանակությամբ և մեկ անհայտ միացում Ջորավար Անդրանիկ փողոցում: Վթար հայտնաբերվել է նաև Ջրառատ թաղամասում 1լ/վ ջրաքանակով:

● Հացառատ-Լճաշեն (D=500մ, պողպատ) ջրատարի վրա ուսումնասիրությունների արդյունքում Չկալովկա գյուղի մոտ հայտնաբերվել է 10լ/վ ջրաքանակով վթար: Նույն ջրագծի վրա նշված հատվածից 300մ հեռավորությամբ հայտնաբերվել է 3լ/վ քանակությամբ այլ վթար:





Քաղաք Իջևան

● «Անապատ» աղբյուրի ջրատարի վրա իրականացրած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում սողանքի տակ ճեղքված D=200մմ ջրագծի վրա հայտնաբերվել է վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q = 5լ/վ ջրաքանակ:




Քաղաք Երևան

● Շենգավիթ տեղամասի հետ համատեղ իրականացրած աշխատանքների արդյունքում «Շողակաթ» հեռուստաընկերության հարևանությամբ խցափակվել և շահագործումից հանվել է մոտ D = 50մմ քայքայված անհայտ ջրագիծ, որ նախկինում սնուցում էր Չեխով 33ա հասցեում տեղակայված մանկապարտեզը: Արդյունքում տնտեսվել է Q=1լ/վ ջրաքանակ:




● Շենգավիթ տեղամասի Արարատյան 62 հասցեի պոմպակայանում նկատվել էր ճնշման անկում, որից հետո կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Արարատյան 62/2 շենքի մուտքագծի վրա առկա է վթար, որը գտնվում է շենքի նկուղում: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է Q=8լ/վ ջրաքանակ:

● «Շենգավիթ» տեղամասի Տարոնցի 3 շենքի բակում հայտնաբերվել է գաղտնի վթար նշված շենքի մուտքագծի վրա: Քայքայված ջրագիծը «Շենգավիթ» տեղամասի աշխատակիցների ուժերով փոխարինվել է նոր ՊԷ խողովակով՝ $L \approx 50$ մ: Արդյունքում տնտեսվել է $Q \approx 3$ լ/վ ջրաքանակ:



● «Մաշտոց» տեղամաս Լուկաշին 2-րդ փողոց 47 տան դիմաց իրականացրած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար: Վթարը վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 15$ լ/վ ջրաքանակ:

● «Կենտրոն» տեղամասի Նորք Մարաշ Հովսեփյան փողոցում իրականացրած վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար՝ նշված փողոցով անցնող $D=500$ մմ ջրագծի վրա: Արդյունքում տնտեսվել է $Q=5$ լ/վ ջրաքանակ:



● «Հյուսիս» տեղամաս Նոր Նորքի 2-րդ գանգված Մոլդովական 44/2 շենքի հարևանությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է գաղտնի վթար, որը լցվում էր էլ. ենթակայան: Ջրի արտահոսքը կանխելուց հետո տնտեսվել է $Q=1$ լ/վ ջրաքանակ:


● Նուբարաշեն համայնքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է թվով 4 վթար $D = 50$ մմ, $D = 100$ մմ, $D=300$ մմ ջրագծերի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվել է $Q = 4$ լ/վ ջրաքանակ:



3.6 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ ամսում Քլորի և Խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.


Քաղաք Դիլիջանի «Գոլովինո» ՋՄԿ-ում տեղի շահագործող անձնակազմի ջանքերով վերանորոգվել է (մոտ 900 ք/մ տարածքի օդատաքացման համակարգ) անսարք վիճակում գտնվող ջեռուցման համակարգը: Արդյունքում փոխարինվել են 2 հատ տաք ջրի շրջապտույտային պոմպ, 250 հատ ջեռուցման մարտկոց, մոտ 64 հատ կարգավորիչ փական, խողովակաշարեր և ձևավոր մասեր՝ սառցակալումներից խուսափելու և ձմռան ամիսներին օդի դրական ջերմաստիճանը ապահովելու նպատակով:



Քաղաք Դիլիջանի «Գոլովինո» ՋՄԿ-ում տեղի շահագործող անձնակազմի ջանքերով կրի լուծույթ պատրաստող սարքավորումը բերվել է այն մակարդակի, որ մշակվող ջրին պատրաստված կրակաթը խառնվի ոչ թե դողավորող պոմպի միջոցով, այլ ինքնահոս եղանակով: Դրա համար պատրաստվել և տեղադրվել է 1 հատ տակդիր, 1 հատ հարթակ և 1 հատ աստիճան, ինչի արդյունքում կապահովվի ինքնահոս գրավիտացիոն համակարգը:

3.7 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 33588 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 11060 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 8758 զանգ (79,2%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 2302 զանգ (20.8%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 22528 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 16206 զանգ (71,9%), իսկ մարզերինը՝ 6322 զանգ (28,1%):



185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեգիր

	Ստորաբաժանում	2020 նոյեմբեր	2021 նոյեմբեր	
Առևտրային	Ընդամենը	11773	11060	-6.06%
	ԵՐԵՎԱՆ	9066	8758	-3.40%
	ՄԱՐԶԵՐ	2707	2302	-14.96%
Ծախսեր	ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ	19534	22528	15.33%
	ՀԱՐԱՎ	8582	10596	23.47%
	Շենգավիթ	1847	2374	28.53%
	Կենտրոն	2770	2101	-24.15%
	Հյուսիս(Ավան,Նոր Նորք)	1002	916	-8.58%
	Էրեբունի	1141	2802	145.57%
	Պոմպ	329	573	74.16%
	Մարզեր	1493	1830	22.57%
	այդ թվում Կոյուղու վթար	57	41	-28.07%
	այդ թվում Դիտահորի խցանում	3275	2732	-16.58%
	ՉՑՈՒՄԻՄ	10952	11932	8.95%
	Արարկիր	2385	2171	-8.97%
	Քանաքեռ-Զեյթուն	1205	1247	3.49%
	Մաշտոց	1907	1720	-9.81%
	Շահումյան	1576	1606	1.90%
	Պոմպ	722	696	-3.60%
	Մարզեր	3157	4492	42.29%
այդ թվում Կոյուղու վթար	63	68	7.94%	
այդ թվում Դիտահորի խցանում	3613	3650	1.02%	
	Ընդամենը	31307	33588	7.29%

● 2020թ. նոյեմբերի համեմատ՝ 2021թ. նոյեմբեր ամսին 6.06 %-ով նվազել է առևտրային զանգերի քանակը, իսկ 15.33%-ով ավելացել է շահագործման զանգերի քանակը:

● Հարավ շահագործման տեղամասի զանգերի քանակը ավելացել է 23.47 %-ով, ինչը պայմանավորված է եղել հիմնականում նոյեմբերի 4/5 Գառնի-Երևան ջրատարի պլանային աշխատանքներով, իսկ հյուսիս շահագործման տեղամասի զանգերի քանակը ավելացել է 8,95%՝ հիմնականում պայմանավորված մարզերից ստացված շահագործման վերաբերյալ բողոքներով: 2020թ. նոյեմբերի համեմատ՝ 2021թ. նոյեմբեր ամսին 25%-ով ավելացել է հայտարարությունների, 20%-ով՝ ֆիքսված զանգերի քանակը և 3%-ով՝ 5 բոպեից ավել զանգերի քանակը:

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Նոյեմբերին արտակարգ պատահարներ կամ լուրջ հանրային արձագանք ստացած իրադարձություններ գրեթե չեն գրանցվել: Դրանով պայմանավորված, Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/ հիմնականում զբաղված է եղել համակարգում մշտապես իրականացվող աշխատանքների հնարավորինս լայն լուսաբանմամբ: Խոսքն առաջին հերթին ներդրումների մասով հանրությանը ներկայացվող տեղեկատվության մասին է: Այն ունեցել է երկու ուղղություն և վերաբերվել է.



▶ պարտադիր կատարվող աշխատանքների ծրագրով /ՊԿԱՕ/ իրականացվող մեծածավալ ու ծախսատար աշխատանքներին,

▶ ընկերության կողմից սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով իրականացվող փոքրածավալ ու նվազ ծախսատար, բայց կոնկրետ տվյալ բնակավայրի համար կարևոր նշանակություն ունեցող լրացուցիչ ծրագրերին:

Տեղեկատվությունը էլ սպառողներին հասցվել է համապատասխան լրատվամիջոցներով, էլնետով դրա կարևորությունից և առանձնահատկությունից: Այսպես, նոյեմբերին Կենտրոն հեռուստատվիքով պատրաստվել է և եթեր հեռարձակվել 2 ռեպորտաժ ՊԿԱՕ-ով իրականացվող քլորակայանների կառուցման ու վերակառուցման, ինչպես նաև Արարատյան-Երևան մայրուղային ջրատարի որոշ հատվածների փոխարինման ընթացքի ու հանրային կարևորության մասին: Այս նպատակով ՀԿԲ-ն լրագրողների համար կազմակերպել է այցելություն Արագածոտնի մարզի 3 քլորակայան և Արարատի մարզի ջրաղբյուր:



Սակայն նշված կարևոր թեմաները լուսաբանվել են շարունակաբար առաջին հերթին facebook.com/veolia.armenia էջում: Մասնավորապես խոսքը Գավառի Հացավան թաղամասում, «Մաքրավան» ջրաղբյուրում ու Սպիտակում քլորակայանների կառուցման մասին է: Նշվել է, որ վերջին 2 տարիներին քլորակայանների արդիականացման վրա Վեոլիա Ջուր ընկերությունը ծախսել է 164 մլն դրամ: Արդեն կառուցվել, վերակառուցվել կամ վերանորոգվել է 12 քլորակայան՝ հաջողությամբ լուծելով վաղուց գոյություն ունեցող ջրի քլորացման խնդիրը մարզերում:

Facebook.com/veolia.armenia էջում ներկայացվել են նաև ՊԿԱՕ-ով իրականացվող այլ աշխատանքներ, մասնավորապես խոսքը Գորիսի գլխավոր բաժանարար

փականային հանգույցի վերակառուցման մասին է, որտեղից կարգավորվում է քաղաքի 8 թաղամասերի ջրամատակարարումը, Գավառի մի շարք փողոցների բաշխիչ ցանցի արդիականացման, Երևան Կենտրոն վարչական շրջանում ջրագծերի կառուցման:

Ինչ վերաբերում է ընկերության սեփական նախաձեռնությամբ կատարվող աշխատանքներին, ապա հաշվետու ժամանակամիջոցում ներկայացվել է Ապարանում, Բերդում, Դիլիջանում, Մեղրիում, Մալաթիա-Մեբաստիայում, Շենգավիթում, «Ղազարավան» ջրաղբյուրում, Գետափում, Գորիսում, Աշտարակում, Մեծամորում նոր ջրագծերի կառուցումը կամ բաշխիչ ցանցի վերակառուցումը, ինչպես նաև մի շարք Ջրի մաքրման կայանների արդիականացումը: Նաև վթարներին ՎեոլիաԹիմի արագ արձագանքմանն է անդրադարձ կատարվել, որպես կայուն ջրամատակարարման ապահովման կարևոր գործոնի: Օրինակ, Հրազդանում, Գյումրիում, «Խարբերդ» ՕԿՋ-ում, Ծաղկաձորում, Մալաթիա-Մեբաստիայում:




Ընդհանուր առմամբ խոսքը ավելի քան 3 տասնյակ տարաբնույթ իրապարակումների մասին է: Սակայն դրանք միանման չեն ներկայացվել հանրությանը Հրապարակումների արդյունավետության ապահովման նպատակով կիրառվել է դրանց մատուցման տարբեր ձևեր:

Օրինակ, ՎեոլիաԹիմի աշխատանքի առանձնահատկություններն ու գործին նվիրվածությունը ցույց տալու համար նոյեմբերի 11-ին, երբ հանրապետության շրջանների զգալի մասում տեղաց առաջին ձյունը, հրապարակվեց լուսանկար առատ ձյան պայմաններում ջրմուղագործների աշխատանքի մասին: Նույն խնդիրն էր լուծում Աբովյանում, հորդ անձրևի տակ նոր ջրագծի կառուցման, ինչպես նաև գիշերը, լուսարձակի լույսի ներքո «Գառնի - Երևան» մայրուղային ջրատարի վերանորոգման մասին պատմող լուսանկարների հրապարակումը:

Յուրաքանչյուր թեմայի համար մատուցման լավագույն արդյունավետ ձևի փնտրտուքի օրինակ է ծառայում հոկտեմբերին ապօրինությունների դեմ պայքարի արդյունքների ներկայացումը ըստ ուղղությունների առանձին տողերով.

«Հայտնաբերվել է

- ▶ Ջրաչափի անսարքություն - 899
- ▶ Ջրաչափի արտաքին միջամտություն - 235
- ▶ Ապօրինի միացում և շրջանցող ջրագիծ - 291
- ▶ Ջրաչափի ինքնակամ ապամոնտաժում և ջրագրկման խախտում - 118




Այօրինի ջրօգտագործման ծավալը - 323 հազար խորանարդ մետր»:
 Հրապարակումների արդյունավետության բարձրացմանն է միտված եղել նաև լուսանկարների, ինֆոգրաֆիկայի ու տեսանյութի օգտագործումը: Մասնավորապես, ՀԿԲ-ն երկարաժամկետ ու լայնամաշտաբ ջրանջատումների դեպքում որպես կանոն շահագործման տեղամասերի միջոցով աշխատանքների վայրից օպերատիվորեն ստացել է լուսանկարներ կամ տեսանյութեր ու համապատասխան պարզաբանում հրապարակել [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia) էջում, դրանով իսկ մեղմացնելով հանրության դժգոհությունը ջրանջատումից: Գործին օգնել է նաև Կենտրոն հեռուստատվիքի 2 ռեպորտաժների ցուցադրությունը, ինչը մեծ արձագանք է ստացել:

Ընդհանրապես ցուցադրական նյութերը ինքնին արդեն լուրջ քարոզչանյութ են հանդիսանում ու երբեմն առանց լրացուցիչ բացատրության հանրությանը պատկերացում են տալիս ընկերության աշխատանքի ու ձեռքբերումների մասին: Դրանց թվին կարելի է դասել Վայք համայնքի ղեկավարի պաշտոնական շնորհակալագիրը Վեոլիա ջուր ՓԲԸ-ին և ընկերության Տեխնիկական տնօրեն Վահրամ Մաճկալյանին Նոյեմբերյանի պատվավոր քաղաքացի հռչակելու վերաբերյալ համայնքի որոշումը:

Բնականաբար, նոյեմբերին հանրությանն են ներկայացվել բոլոր խոշոր ջրանջատումների, մրցույթների ու թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները: Մշտապես թարմացվել է [Veolia.am](https://veolia.am) կայքը, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերը:

Հրապարակումների մի մասը նաև առաքվել է հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, [facebook.com/veolia.armenia](https://www.facebook.com/veolia.armenia)-ից բացի, տեղադրվել են սպառողների հետ Օպերատորի կապի նաև մյուս digital միջոցներում. [Veolia.am](https://veolia.am) պաշտոնական կայքում, twitter.com/Veolia_AM և [youtube Veolia Jur](https://www.youtube.com/channel/UC...) էջերում:



*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*



5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

- Հաշվետու ամսում Բաժնի կողմից մշակվել են Բարձր ռիսկերի կառավարման «Ամբարձման աշխատանքներ» և «Էլեկտրականություն» ստանդարտների պրեզենտացիաների նյութերը:
- ՈԱԱ բաժինը, ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջներով, մշակեց Ընկերության հիպոթրիդի հաբերով վարակազերծման տեխնոլոգիայից հեղուկ քլորով վարակազերծման տեխնոլոգիայի անցումով պայմանավորված թվով 1 քլորակայանի, ինչպես նաև Ընկերության սանիտարական գոտիներում և կենտրոնական ավտոհավաքակայանում տեղադրված թվով 5 ամբարձիչ սարքավորման տեխնիկական անվտանգության վկայագրերը:

5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Ամենօրյա ռեժիմով Ընկերության ստորաբաժանուժներից ՈԱԱ բաժինն են ներկայացվել կառուցվածքային ստորաբաժանուժների անձնակազմերի ջերմաչափման և զրասենյակների ախտահանման աշխատանքների վերաբերյալ տվյալները:

5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱԸՆԵՐ

- Բաժինը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 28/09/2005թ. 2388-Ն որոշմամբ հաստատված «Գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգի» պահանջներով, «Պրեմիում գազ» ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող թվով 104 աշխատակցի համար հեղուկ և սեղմված բնական գազով շահագործվող մեքենաների վարորդների հրահանգավորում և վկայականների տրամադրում:
- Բաժինը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 23/11/2006թ. N 1933-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոնների» տեխնիկական կանոնակարգի և «ՀՍՏ 312-2009_Կազմակերպությունների էլեկտրատեխնիկական և էլեկտրատեխնոլոգիական անձնակազմերին էլեկտրաանվտանգության որակավորման խմբեր շնորհելու պայմաններ» ստանդարտի պահանջներով, կազմակերպեց «Էներգետիկայի գիտահետազոտական ՓԲԸ» հավատարմագրված փորձագետների կողմից Ընկերության էլտնտեսությունները շահագործող, սպասարկող պատասխանատու անձի որակավորման դասընթաց թվով 2 աշխատակցի համար:
- Բաժինը Ընկերության Ջրի որակի վարչության կենտրոնական լաբորատորիայի թվով 16 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց «Լաբորատոր անձնակազմին ներկայացվող անվտանգության պահանջներ» և «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» դասընթացները:




- Հիմք ընդունելով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի կողմից հաստատված «Անձնակազմի աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության, մասնագիտական և աղմինիստրատիվ հմտությունների բարելավման մասով ուսուցման, վերապատրաստման և (կամ) որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, որակավորման վկայականներ տրամադրելու մասին կարգի» պահանջները,

ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Ամբարձման աշխատանքներ» ԲՌԿ ստանդարտի պահանջները, բաժնի կողմից կազմակերպվեց և իրականացվեց «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ամբարձիչ սարքավորման տեխնիկապես սարքին վիճակի և անվտանգ շահագործման պատասխանատու անձի որակավորման», «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» և ԲՌԿ ստանդարտ «Ամբարձման աշխատանքներ» առկա դասընթաց և գիտելիքների ստուգում՝ Ընկերության Տեխնիկական տնօրինության ՔևեՋՄԿ և ՌՄ վարչության Էլեկտրական համակարգերի կառավարման ծառայությունների, Գործառնական տնօրինության ԿՄԿ և ՋՄԿ ծառայության, «Հարավ» շահագործման տնօրինության Կենտրոն Շահագործման տեղամասի թվով 11 աշխատողի համար:



Պետք է նշել, որ վերոնշյալ առկա դասընթացները կազմակերպվեցին COVID-19 համավարակի տարածման դեմ ուղղված սանիտարական կանոնների պահանջներին համապատասխան. դասընթացների մեկնարկից առաջ կատարվեց մասնակիցների հեռավար ջերմաչափում, գրանցում և COVID-19 տարածման կանխարգելման վերաբերյալ սանիտարական կանոնների իրազեկում: Դասընթացների ողջ ընթացքում մասնակիցների միջև պահպանվեց 1,5 մ սոցիալական հեռավորություն, մասնակիցները և դասընթացավարները կրեցին դիմակներ:

2020-2021թթ. կազմակերպված դասընթացներին/թեստավորումներին (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



5.4. ԲՈՒԺՁՆՆՈՒՄ


● Ընկերությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 15/07/2004թ. N1089-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հաշվետու ամսում պայմանագրային հիմունքներով «Երևանի թիվ 1 պոլիկլինիկա», «Գուգարք Կենտրոնական պոլիկլինիկա» և «Մարտունի ԲԿ» բուժհաստատությունների հետ համատեղ կազմակերպեց Ընկերության արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի ժառանգար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող թվով 71 աշխատողի համար բժշկական գնումներ (թերապևտի, նյարդաբանի, ակնաբույժի օտոլարինգոլոգի մաշկաբանի մոտ) և հետազոտություններ (ֆյուրոնկարահնում):

5.5. ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

● Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայքեր Ընկերության թվով 23 քլորակայանում, 2 պոմպակայանում, 1 ՋՄԿ-ում, 9 ՕԿՁ-ում, 1 ԿՄԿ-ում և 20 վարչական շենքում: Ստուգայքների նպատակն է իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

● ՈԱԱ Ծառայության կողմից ուսուժաասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերում իրականացվող վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ:

2021 թ. իրականացված անվտանգության ստուգայքների քանակներն ըստ օբյեկտների



5.6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԻՆ-Ի ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ

● Համաձայն ՀՀ Արմավիրի մարզպետի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների պլանի» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, Ընկերության «Հարավ» Շահագործման տնօրինության «Էջմիածին» և «Արմավիր» շահագործման տեղամասերը, ՈԱԱ Բաժնի համակարգմամբ, 2021թ-ի նոյեմբերի 25-ին և 26-ին, մասնակցեցին ՀԱԷԿ-ի վթարի դեպքում «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով Շտաբային ուսումնավարժանքին, որից հետո պատրաստվեց համապատասխան զեկույց և ներկայացվեց Արմավիրի մարզպետին:

5.7. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

● Բաժինը, «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՄՊԸ-ի փորձագետների հետ համատեղ, պլան-ժամանակացույցի համապատասխան իրականացրել է թվով 44 ԱԿՕ-ի (քրոնակայան, ամբարձիչ սարքավորում, մանիպուլյատոր հարմարանքով կահավորված հեղուկ քլոր տեղափոխող ավտոմեքենա) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքներ:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1 ԻՆՏԵՐՎՅՏԻՎ ՀԱՄԱԿԱՐԳ

Նոյեմբեր ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- SS վարչության աշխատակիցների ամբողջ խմբով անցկացվել են ամենօրյա խմբային քննարկումներ:
- Մի շարք աշխատանքներ են իրականացվել «ՀայՓոստ» ընկերության հետ՝ առցանց նոր վճարային համակարգի ինտեգրման ուղղությամբ:
- Ներդրվել է «Zabbix» SS մոնիտորինգային կենտրոնը: Այն թույլ է տալիս ի հայտ բերել SS ոլորտին առնչվող խնդիրները, որի արդյունքնում խնդիրներին տրվում է շուտափույթ լուծում և կատարվում են անալիտիկ հետազոտություններ:

● Ակտեր
Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է նոյեմբեր ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Իսպիտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	7	11.4	1.8
Էրեբունի	11	6.5	1.1
Շենգավիթ	11	5.4	0.9
Կենտրոն	1	0.9	0.2
Արաբկիր	11	7.2	1.3
Մաշտոց	12	6.2	1.0
Շահումյան	10	3.4	0.5
Քանաքեռ-Զեյթուն	23	10.5	1.6
ԱՎԸ	64	37.4	6.3
Շիրակ	4	3.1	0.5
Արթիկ	7	2.4	0.4
Արարատ	21	2.4	0.4
Աբովյան	38	22.3	3.5
Հրազդան	8	3.0	0.5
Ալավերդի	1	0.3	0.0
Արտաշատ	10	3.8	0.7
Գավառ	8	3.1	0.5
Եղեգնաձոր	3	1.5	0.2
Էջմիածին	6	1.7	0.3
Թալին	2	9.7	0.4
Իջևան	2	0.2	0.0
Կապան	1	0.3	0.0
Մասիս	1	0.3	0.1
Նոյեմբերյան	2	1.0	0.2
Արմավիր	8	2.1	0.3
Վայք	3	0.8	0.1
Աշտարակ	9	4.1	0.6
Զարենցավան	3	3.8	0.6
Սպիտակ	1	0.1	0.0
Ընդամենը	288	154.9	24.1

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)՝ Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում են ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում են նոյեմբեր ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Անսարքություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	13	4.57	34	0.66
Էրեբունի	15	9.79	60	0.38
Շենգավիթ	12	3.22	37	0.40
Կենտրոն	14	4.12	41	0.58
Արաբկիր	10	3.42	32	0.22
Մաշտոց	16	8.07	109	12.35
Շահումյան	18	5.20	60	0.56
Եղվարդ	2	0.34	1	0.01
Քանաքեռ-Զեյթուն	6	2.70	35	0.21
Լոռի	10	3.27	46	0.17
Շիրակ	18	5.05	92	0.57
Արթիկ	11	2.92	24	0.24
Արարատ	2	0.17	20	0.36
Աբովյան	5	2.99	20	0.16
Հրազդան	11	2.61	12	0.03
Ալավերդի	-	-	2	0.01
Աշոցք	-	-	7	0.02
Ապարան	-	-	3	0.00
Արտաշատ	4	0.67	32	0.28
Բերդ	-	-	1	0.00
Գավառ	4	1.22	37	0.28
Գորիս	2	0.52	12	0.04
Դիլիջան	1	1.55	13	0.15
Եղեգնաձոր	-	-	12	0.06
Էջմիածին	4	1.10	18	0.09
Թալին	-	-	1	0.01
Իջևան	5	0.37	5	0.01
Կապան	-	-	5	0.02
Ճամբարակ	-	-	1	0.00
Մասիս	10	3.51	13	0.08
Մարտունի	-	-	1	0.21
Նոյեմբերյան	-	-	11	0.07
Արմավիր	2	0.26	45	0.21
Ձերմուկ	2	0.77	-	-
Սևան	4	1.02	12	0.03
Վայք	1	0.26	6	0.03
Աշտարակ	2	0.24	10	0.11
Զարենցավան	10	4.01	14	0.03
Սիսիան	-	-	11	0.08
Սպիտակ	3	0.34	14	0.10
Ստեփանավան	6	3.09	3	0.01
Ընդամենը	223	77.37	912	18.79



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am